արգելափակոցն է պարզել Հայ եկեղեցին՝ ի գլուխ ունենալով Հայոց Հայրապետին, եւ իր հոգեւոր ջրփոքով, ծիսական կյանքի աշխուժացումով դիմակայում է դարի մարտահրավերներին: Նորին Սրբությունը՝ որպես աշխարհասփյուռ հայության ընդհանրական հովվապետ, անցյալից վերընձյուղում է նորը՝Էջմիածնի լույս ջահով լուսավորելով մեր ժողովրդի հոգեւոր-իմացական անդաստանը: Տասը տարի շարունակ Վեհափառ Հայրապետը մշտանորոգում է Լուսավորչի անշեջ կանթեղի յուղը՝ բորբոք պահելով Լուսավորչյան հավատքը: Գարեգին Երկրորդը, հիրավի, մեր ժամանակների ճշմարիտ Հովվապետն է, ով կարողանում է այդ կանթեղի լույսով համախմբել Հայկի զավակներին ի Հայաստան եւ ի Սփյուռս աշխարհի: Այդ լույսով համախումբ՝հաղթահարելի են մեզ համար հարաբերապաշտության ներկա մարտահրավերները:

Ազգովի միակամ, պատասխանատվության բարձր զգացումով խմբվենք Մայր եկեղեցու շուրջը՝ Գարեգին Երկրորդի հայրական օրհնությունն ստանալու եւ Բարձրյալի բարեհաճությանը արժանանալու համար: Սատարենք Հայոց Հայրապետին, աղոթենք նրա համար եւ ցանկանք անսպառ ուժ եւ զորություն՝ դարերի ալեբախություններին դիմակայած մեր ինքնության նավը իմաստնությամբ եւ խաղաղությամբ առաջնորդելու համար:

Ծնորհք, սէր եւ օրհնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն»:

Ողեշունչ խոսքի ավարտին Նավասարդ արքեպիսկոպոսն Արարատյան Հայրապետական թեմի անունից Նորին Սրբությանն ընծայաբերեց 1805 թ. Դավիթ Ե Էնեգեթցի Կաթողիկոսի օրոք Կոստանդնուպոլսում հրատարակված մեծադիր Ավետարան, որ շքեղորեն կազմվել էր Նավասարդ սրբազանի, տեր եւ տիկին Աշոտ եւ Շուշան Սուքիասյանների նախաձեռնությամբ:

Հայրապետական մաղթանքի արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, թեմական ներկայացուցչական ժողովի մասնակիցները, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը եւ բարեպաշտ այլ հայորդիներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՒ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադի եւ հայ համայնքի հրավերով եռօրյա պաշտոնական եւ հովվապետական այցով մեկնեց Սիրիայի Արաբական Հանրապետություն:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Իրաքահայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը, Ֆրանսահայոց թեմի առաջնորդ Տ.

Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը, Եգիպտահայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանը, գավազանակիր Տ. Հովնան աբեղա Հակոբյանը, արաբական երկրներում Հայաստանի Հանրապետության դեսպանները, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը եւ դիվանագետ փիար Լեւոն Սարգսյանը:

Սիրիահայոց թեմը հնագույններից է. Դամասկոսի թեմի մասին հիշատակությունները հասնում են մինչեւ ԺԵ դար: Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետական այցը պատմության մեջ հավերժացնելու նպատակով Դամասկոսի Բար-Թումա հրապարակում գտնվող Ս. Սարգիս հայոց առաջնորդանիստ եկեղեցու բակում կատարվեց հուշաքարի հանդիսավոր բացում՝ «Կանգնեցաւ յուշարձանս ի յիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատմական Հովուապետական Այցելութեան ի Դամասկոս 13 նոյեմբեր 2009» հուշագրով:

Վեհափառ Հայրապետը պաշտոնական հանդիպում ունեցավ նաեւ ՍԱՀ-ի նախագահ Բաշար Ալ-Ասադի հետ, որի այցով էլ Նորին Սրբությունը գտնվում էր Սիրիայում: Նախագահը ջերմորեն ու բարեկամաբար վերհիշեց սույն թվականի հուլիս 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստան կատարած իր պաշտոնական այցը՝ մեծապես գնահատելով նաեւ Սիրիայի ներքին կյանքում իրենց լուրջ ներդրումն ունեցած հայ համայնքին եւ միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսությունների զարգացմանն ի շահ գործադրած Նորին Սրբության անձնական ջանքերը:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ Սիրիայի Արաբական Հանրապետության գլխավոր մուֆտի Ահմադ Բադր-Ալ-դին-Հասունի, Ազգային ժողովի նախագահ Մահմադ Ալ-Աբրաշի եւ վարչապետ Նաջի Օդրիի հետ: Վեհափառ Հայրապետի՝ ՍԱՀ-ի կրոնից գործերի նախարար Ավդ Ալ-Սաղարի հետ հանդիպումը կայացավ Դամասկոսի Օմայյան մզկիթում, որտեղ ավանդության համաձայն ամփոփված էին Հովհաննես Մկրտչի մասունքները, եւ որն ուխտատեղի է նաեւ մահմեդական հավատացյալների համար:

Դամասկոսի հետ կապված մյուս կարեւոր պատմական իրողությունը Ս. Պողոս առաքյալի կյանքի առաջին շրջանին վերաբերող դրվագն է, երբ հեթանոսաց առաքյալը, հալածվելով քաղաքի հրեական համայնքի կողմից, պարսպի վրայով զամբյուղի մեջ թաքնված իջեցվում է ներքեւ եւ հեռանում Դամասկոսից (հմմտ. Գործք Առ. Թ 20-25): Հենց այս վաղ քրիստոնեական նվիրական զգացումի ու հիշատակի առաջ էլ Վեհափառ Հայրապետը եւ Անտիոքի Հույն պատրիարք Իգնատիոս Դ Հազիմը գոհաբանական աղոթք բարձրացրին՝ հանուն Քրիստոսի Եկեղեցու անսասանության եւ համայն աշխարհի խաղաղության: Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ նաեւ Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Զաքքա

Ա Իվասի եւ Ասորի Կաթոլիկ Եկեղեցու պատրիարք Գրիգորիոս Գ Լահամի հետ:

Հիշարժան էր նաեւ Նորին Սրբության այցը Դամասկոսի ազգային կրթարաններին: ՀԲԸՄ Կյուլպենկյան Առաջապահ վարժարանը Վեհափառ Հայրապետին դիմավորեց հանդիսավոր օրհներգի ներքո: Կյուլպենկյան Առաջապահ նախակրթարանն արդեն 80 տարի գործում է Սիրիայի հայ համայնքում եւ ներկայումս ունի շուրջ 200 աշակերտներ: Աշակերտների հետ իր հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց ՀԲԸՄ-ին՝ հավատարմորեն ազգային կրթական վարժարաններին տարիներ շարունակ ցույց տրվող հովանավորության համար:

Վեհափառ Հայրապետի այցելած հաջորդ ազգային կրթարանն Ազգային Միացյալ վարժարանն էր՝ շուրջ 200 աշակերտներով: Մանկանց շուրթերով «Հայր մեր»-ի ոգեշունչ աղոթքից հետո Նորին Սրբությունն իր խոսքում մասնավորապես նշեց. «Եկել եմ Հայաստանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից… Մենք բոլորս ապրում ենք այս երկու սրբություններով՝ Հայրենիքով եւ Սուրբ Էջմիածինով: Հայրենիքի արժանավոր զավակները նրանք են, ովքեր ապրում են այդ սրբություններով«:

Ազգային Թարգմանչաց վարժարանը վերջինն էր, որ արժանացավ Նորին Սրբության այցին: Կրթարանը գործում է Դամասկոսի հայոց առաջնորդարանի հովանու ներքո եւ ունի շուրջ 350 աշակերտներ: Վարժարանը հիմնվել է 1898 թ. եւ գործում է երկու՝ նախնական եւ միջնակարգ կրթական համակարգերով: Թարգմանչաց վարժարանի սաներն ազգային երգ ու պարով դիմավորեցին Նորին Սրբությանը, ով իր հայրապետական պատգամը տվեց ներկաներին. «Այս երեխաները մեր պահապան հրեշտակներն են: Թերեւս կարող ենք մտածել, որ մենք ենք նրանց պահում-պահպանում: Բայց իրականում նրանք են մեզ պահպանում, մեզ առաջնորդում մեր աշխատանքում, մեզ մղում պայքարի…»:

Նոյեմբերի 15-ին Դամասկոսի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում ձեռամբ Վեհափառ Հայրապետի մատուցվեց հայրապետական Սուրբ եւ Անմահ Պատարագ: Նորին Սրբությունը, կարեւորելով Մայր Աթոռի դերը համայն հայության կյանքում, իր միտքը ձեւակերպեց գեղեցիկ մի համեմատությամբ. «Սուրբ Էջմիածինը հայ կյանքի աղն է, որի համն այլ տեղ հնարավոր չէ գտնել»:

Վեհափառ Հայրապետը, հովվապետական եւ պաշտոնական իր այցն ավարտելով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադարձավ նոյեմբերի 16-ին: